

Տ-82

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՔՈՉԱՐՅԱՆ ՀԱՅԿ ՄԿՐՏՉԻ

ՈՒՄՍԱՅԻ ԿԱՐԳԱՎԻճԱԿՆ ՈՒ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ
ՂՈՒՐԱՆՈՒՄ ԵՎ ՎԱՐ ԽՍԼԱՄԱԿԱՆ
ՍԿՁԲՆԱԴՐՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ե.00.02 «ԸՆԴԱՍՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
առենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ա Խոյացյանը քայլույթ և նորոգություն



ԵՐԵՎԱՆ - 2005

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական դեկավար՝

բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Դ. Ա. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդունակություններ՝

բանասիրական գիտությունների դոկտոր
Ա. Կ. Կողմոյան
պատմական գիտությունների թեկնածու
Ա. Ա. Փաշայան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2005թ. նոյեմբերի 16-ին, ժ. 15.00-ին, ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի 006 մասնագիտական խորհրդում
(հասցե՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2005թ. հոկտեմբերի 15-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար

Դ. Հովհաննիսյան

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԱՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

7-րդ դարում իսլամի առաջացումից հետո ի հայտ է գալիս հասարակության կազմակերպման նոր ձև՝ ումման, որի շրջանակներում մարդկանց միավորում էր ոչ թե նախախամական շրջանի ցեղային արյունակցական կապը, այլ՝ միաստվածության (քաղաքացիություն) գաղափարը։ Ումմայի դասական շրջանը, որ իդեալականացվեց իսլամի հետագա դարերում իսլամական կրոնական, քաղաքական տարբեր հոսանքների կողմից, համընկնում է 622-632թթ.։ և պայմանավորված է Մաղինայում Մուհամմադի մարգարեական առաքելությամբ։ Այս փուլում ումման ընկալվում է որպես հանրություն, որի անդամները հավատում էին միակ աստծուն, ունեին սուրբ գիրք/եր/, մարգարեներ ու աղորավայրեր և առաջնորդվում էին ծշմարտությամբ և արդարությամբ։ Սա է պատճառը, որ վաղ իսլամը հրեաներին և քրիստոնյաներին համարում էր ումմայի անդամներ։ Իսլամի մարգարեի մահվանից հետո ումմայի գաղափարը կորցնում է իր նախնական նշանակությունը՝ առաջ բերելով հասարակության կազմակերպման նոր՝ խալիֆայի և ամիր ալ-մու'նինի ինստիտուտները։

Ումմա եղոք դարերի ընթացքում վերածել է տարողունակ հասկացության՝ պայմանավորելով հասարակական և պատմամշակութային գիտակցության գարգացման ընթացքը, ինչն ակնհայտ է դառնում 7-10-րդ դարերի աղբյուրագիտական նյութի ուսումնասիրությամբ։

Ումման, որպես արժեքային համակարգ և կառավարման հայեցակարգ, սնվում էր շարիաթից և ֆիկիից։ Այդ իսկ պատճառով սույն խնդրի ուսումնասիրությունը սկզբունքային նշանակություն ունի միջնադարյան իսլամական հասարակության մեջ տեղի ունեցած պատմական գործընթացների և մշակութային համակարգի ձևավորման քացարության համար։

Ումնա հակացության ուսումնասիրությունը, որպես առանցքային և հիմնարար արժեք, չափազանց կարևոր է և արդիական իսլամագիտության տեսանկյունից, քանի որ թույլ է տալիս վերլուծել իսլամի՝ որպես արժեքային համակարգի, ձևավորման ընթացքը:

Դիշյալ թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նաև խորքային մակարդակում հասկանալ ներկայումս իսլամական աշխարհում առկա կրոնա-քաղաքական գաղափարախոսությունների արժեքային համակարգերը, որոնցում իդեալականացված է մադինայական ումնան. Ումնայի մանրակրկիտ ուսումնասիրությամբ էլ ավելի տեսանելի են դառնում միջազգային իսլամական համագործակցության և իսլամական միասնության գաղափարական-քաղաքական հիմքերը ու մի շարք առանձնահատկությունները:

Ումնայի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել Դայաստանի Դանրապետության արտաքին քաղաքական որոշակի մոտեցումներ մշակելու տեսանկյունից՝ նկատի առնելով Վերջինիս ներգրավվածությունը Մերձավոր Արևելքի հասարակական և քաղաքական գործընթացներին: Դիշյալ թեմայի ուսումնասիրությունը կարևոր է նաև Դայաստանի հարակից պետություններում իսլամի հարածուն դերը գնահատելու տեսանկյունից:

ԱԾԽԱՏԱՍՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թեման ընտրվել է ումնայի ուսումնասիրման և դրա ամբողջական բնութագրումից ելնելով, որի համար հեղինակը իր առջև դրել է հետևյալ խնդիրները:

- Գոյություն ունեցող սկզբնադրյուրների և այլ նյութերի հիման վրա բացահայտել ումնայի առաջացման պատճական նախադրյալները:
- Հետազոտել ումնա եզրի կիրառությունը Ղուրանում և հարիսներում՝ պարզաբանելու համար օգտագործման շերտերն ու իմաստները:
- Քննարկել ումնայի առաջնորդի ինստիտուտի բնույթը և էությունը:
- Ուսումնասիրել ումնայի անդամների կարգավիճակը:
- Ստեղծել ումնայի ուսումնասիրության աղբյուրագիտական հիմք:

Ումնա հակացության ուսումնասիրությունը պահպանության մեջ ընդունված է ԱԾԽԱՏԱՍՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման, ընդիանուր առնամբ, մեզանում դեռևս չի արժանացել հատուկ ուսումնասիրության: Զնայած ումնային առնչվող որոշ հարցեր քննարկվել են առանձին հայ և օտարազգի հեղինակների կողմից, սակայն ումնայի վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն, որպես այդպիսին, չի ներկայացվել առանձին աշխատությամբ: Ներկայացվող հետազոտությունն այդ առումով առաջին գիտական փորձն է:

Գիտական նորույթ է ատենախոսության մեջ ումնայի, որպես արժեքային համակարգի և կառավարման հայեցակարգի, ինչպես նաև դրա զարգացման ընթացքի ուսումնասիրությունը, ինչն ամրագրված է աղբյուրագիտական հարուստ փաստերով, որոնք հեղինակի կողմից մեզանում առաջին անգամ դրվում են գիտական շրջանառության մեջ:

ԱԾԽԱՏԱՍՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՐՍՍՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 7-րդ դարից մինչև 13-րդ դարն ընկած ժամանակաշրջանը, որ ներառում է «արդարակյաց խալիֆաների» (632-661թթ), Օմայյան և Աբրասյան խալիֆայությունների շրջանը: Ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեմայի ժամանակագրությունը ներառում է ումնայի ձևավորման, կայացման և հետագա զարգացման շրջանը:

ՍԿՂԲՆԱՌՅՈՒՆԵՐԻ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է արաբերեն, հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով տարարմությամբ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Ուսումնասիրության համար որպես կարևոր սկզբնադրյուր ծառայել են Ղուրանը¹, սուննիական իսլամի

¹ Արաբերեն ճշշտ տառադարձությամբ հնչում է «ալ-Կուր'ան», սակայն ատենախոսության մեջ կիրառվում է հայ մատենագրության և արևելագիտության մեջ ամրագրված «Ղուրան» ձևը:

հաղիսների վեց հեղինակավոր ժողովածուները. Ալ-Բուկարու (մահ. 870 թ.) և Մուավիյի (մահ. 875 թ.) «Արժանահավատ հաղիսների ժողովածու»-ն², Աբու Դաուդ աս-Սիջիստանի (մահ. 888 թ.) «Սուննա»-ն³, Սուհամմադ ար-Թիրմիզի (մահ. 892 թ.) «Սուննա»-ն⁴, Աբ-Նասա'ի (մահ. 915 թ.) «Սուննա»-ն⁵ և Իբն Մաջի (մահ. 886 թ.) «Սուննա»-ն⁶ և Իբն Խսիակի (VIII-րդ դ.) կողմից կազմած և ավելի ուշ շրջանում Իբն Ջիշամի (IX-րդ դ.) կողմից «խմբագրված» «Կարք Մարգարեի» աշխատությունը⁷:

Առենախսության շրջանակներում Դուրանի հանգատողերը⁸ թարգմանելու ժամանակ համեմատական կարգով օգտագործվել են Դուրանի հ.Յու. Կրաչկովսկու ռուսերեն⁹, Ահմադ և Ղիմա Զիդանների անգլերեն¹⁰, ինչպես նաև Վահագն Ղավթյանի¹¹ ու Ա. Ամրիխաննեանցի¹² հայերեն թարգմանությունները: Իսկ Դուրանի բովանդակության ճիշտ ընկալման համար օգտագործվել են Իբն Քասիրի¹³, Զալալ աղ-Ղիմ ալ-Մահալի և Զալալ աղ-Ղիմ աս-Սույուտիի (Զալալեյն)¹⁴, ինչպես նաև աթ-Մարասիի¹⁵ Դուրանի մեկնաբանությունները՝ թափսիրները:

² Տարեր գրադարաններում հետազոտություն կատարելու արդյունքում՝ օգտվել ենք ալ-Բուկարու և Մուավիյի հաղիսների ժողովածուների երկու տարերի հրատարակություններից, և ատենախսության մեջ նրանց ժողովածուները Ծերիս կողմէն բերված են երկու տարբերակով: Առաջին
հրատարակությունները հետևյալ են:

« صحيح البخاري، دار أحياء التراث العربي، بدون تاريخ الاصدار، المجلدات، ٩، الصفحات، ١٣٧٦
صحيح مسلم، دار الكتب العلمية، ٢٠١١، المجلدات، ٢، الصفحات، ١٤٢٠»

Երկրորդ հրատարակությունները հետևյալ են.

« صحيح البخاري، المجلدات، ٤، دار الحديث، بدون تاريخ الاصدار،
صحيح مسلم، بشرح النووي، القاهرة، ١٤٢١، ٩-٥، دار الحديث، القاهرة ١٤١٩-١٩٩٨»

³ سشن. ابن أبي داود، دار أحياء التراث العربي، بدون تاريخ الاصدار، المجلدات، ٤

« صحيح الترمذ، دار الكتاب الطهري، ٤٤، ١٩٩٩، المجلدات، ٥»

⁴ سشن. الترمذ، دار الفكر، بدون تاريخ الاصدار، المجلدات، ٢»

⁵ سشن. النسائي، دار الفكر، بدون تاريخ الاصدار، المجلدات، ٢»

⁶ سشن. ابن ماجة، دار أحياء التراث العربي، بدون تاريخ الاصدار، المجلدات، ٢»

⁷ المختير النبوية لابن بشير، المجلدات، ١، المكتبة المصرية، بيروت ٢٤٢٤، ٤٤-٤٠

⁸ Սույն ատենախսության մեջ փորձ է արվում «այսքա» եզրի փոխարեն գիտական շրջանառության մեջ դնել հայերեն «հանգատող» տերմինը: «Այսքա» արքերեն բառացի նշանակվում է «աշխանշան», իսկ հայ մատենագրության մեջ ավանդաբար թարգմանվել է «ոտտանվղոր»: Այդ մասին տես. Կոզմոյան Ա.Կ., «Դուրան առ աղ-Ղիմ մեջ Երևան, 2003, էջ 6, հղմ. 1: 2004 թ. լույս է տեսել Է. Հայկենորյանի թարգմանությունը և ծանոթագրությամբ «Սույր Դուրան (29-30-րդ մասեր)» գիրքը, ուր հեղինակը այսք եզրը մեկնաբանում է պատշաճ բառով (տես նշվ. աշխ. էջ 11), որը ներ կարդիրով շեղում է վերը նշված եզրի ամրոցական ճշշտ ընկալումը:

⁹ Կորան. Перевод и комментарии И. Ю. Крачковского, М., 1986.

¹⁰ The Glorious Qur'an: Text and Translation by Ahmad and Dina Zidan, Islamic Home Publishing & Distribution, Cairo, n.d.

¹¹ Վ. Ղավթյանի կողմից թարգմանված 120 հանգատողերը տես. Կոզմոյան Ա.Կ., նշվ. աշխ.:

¹² Դուրան, թարգմ. Ա. Ամրիխաննեանց, Կառավար 1909:

¹³ مختصر تفسير ابن كثير، للإمام الحافظ عاصم الدين ابن القاءع بن كثير القرشي المتفق (٧٠-٧٧)، مكتبة المصنف، القاهرة

¹⁴ تفسير الجلائين، للعلامة جلال الدين المحالي (١٩٧٤-١٩٧٥)، دار التقوى - القاهرة، بدون تاريخ الاصدار

¹⁵ الطبرسي، مجمع البيان في تفسير القرآن، دار الحديث، بدون تاريخ الاصدار، المجلدات، ١

Դայցողի աջև կանգնած խնդիրների լուծմանը նպաստել են ունմայի վերաբերյալ խորհրդային և օտար հետազոտողների արժեքավոր աշխատությունները: Խալամի ծագման շրջանում Արարիայում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական գործնքացների բովանդակության անդրադարձել է Լ.Կ. Նեգրյան իր «Հասարակական կարգը Հյուսիսային և Կենտրոնական Արարիայում V-VII դդ.»¹⁶ աշխատության մեջ: Ավելի լայն շրջանի սոցիալական կառուցվածքի ուսումնասիրություն է կատարել Ո. Լիկին իր «Խալամի սոցիալական կառուցվածքը»¹⁷ մենագրության մեջ: Օ.Գ. Բոլշակովն իր «Արարական խալիֆարի պատմությունը»¹⁸ եռահատորյակում մարդաբան վերլուծում է պատմաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրադրությունը՝ սկսած նախամայնական շրջանից (V դ.) մինչև VII դ. Վերջը, իսկ Մ.Ու. Ուտոտ «Մուհամմադը Սեքքայում»¹⁹ և «Մուհամմադը Մադինայում»²⁰ մենագրություններում բավական մանրամասնորեն քննության է ենթարկել Մուհամմադի գործունեության մեթօքայական և մադինայական շրջանները: Մուհամմադի գործունեության վերլուծության է անդրադարձել նաև Մ. Ուոդինսոնն իր «Մուհամմադի խալամի մարգարե»²¹ գրքում:

Խալամի ծագման վաղ շրջանի պատմական գործնքացները ճիշտ ըմբռնելուն մեծապես նպաստել են նաև Ֆ. Շիրիի «Արարների պատմություն»²², Ն.Դ. Շովիաննիսյանի «Արարական երկրների պատմություն»²³, Ե.Ա. Բելյակի «Արարները, խալամը և արաբական խալիֆարը վաղ միջնադարում»²⁴ և Ա.Ե. Կրիմսկու «Մուսուլմանության պատմությունը»²⁵ աշխատությունները:

Ատենախսության համար որպես խալամագիտական ընդհանուր տեսական հիմք ծառայել են Վ.Կ. Բարտոլիի «Խալամի պատմություն»²⁶ աշխատության համար որպես խալամագիտական ընդհանուր տեսական հիմք ծառայել են Վ.Կ. Բարտոլիի «Խալամի պատմության և արաբական խալիֆարի»²⁷

¹⁶ Негри Л. В. Общественный строй Северной и Центральной Аравии в V-VII вв., М.: Наука, 1981.

¹⁷ Levy R., The Social Structure of Islam, Cambridge University Press, 1962

¹⁸ Большаков О. Г. История Халифата I, Ислам в Аравии (570- 633), М., «Восточная литература» РАН, 2000,

¹⁹ Большаков О. Г. История Халифата II. Эпоха великих завоеваний (633-656), М., «Восточная литература» РАН, 2000 . Большаков О. Г. История Халифата III, Между двух гражданских войн 656-696, М., «Восточная литература» РАН, 1998.

²⁰ Montgomery Watt W., Muhammad at Mecca. Oxford, 1953.

²¹ Montgomery Watt W., Muhammad at Medina. Oxford, 1956.

²² Robinson M., Muhammad. Prophet of Islam, London-New York, 2002.

²³ Штити Ph., A History of the Arabs, London, 1946.

²⁴ Шопхианнинийսյան Ն.Դ., Արարական երկրների պատմություն, Արարներ VII դարից մինչև 1516թ., հ.1, Երևան 2003:

²⁵ Беляев Е. А., Арабы, ислам и арабский халифат в ранее средневековье, М.: Наука, 1965.

²⁶ Крымский А. Е., История мусульманства. Самостоятельные очерки, обработки и дополненные переводы из Дози и Гольдциера, ч. 1-3, М.: 1914.

հետազոտության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել ատենախոսության մեջ արձանված խնդիրները մեկ ամբողջական համակարգում:

ԱՇԽԱՏԱՎԵՒԹԻՒՆ ԿԻՐԱՊԱԿԱՆ ՆՇԱԾԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները գործնականում կարող են օգտագործվել բարձրագույն ուսումնական հաստատությունների ինչպես ներ մասնագիտական դասընթացներում, այնպես էլ ընդհանուր կրթական ծրագրերում: Աշխատանքում տեղ գտած հայիսների, հանգատողերի և «Մադինայի համաձայնագրի» հայերեն թարգմանությունները (այն հայերեն թարգմանվում է առաջին անգամ) կարող են կիրառվել նաև իսլամագիտական, մասնավորապես ումնայի վերաբերյալ այլ ուսումնասիրություններում:

ԱՇԽԱՏԱՎԵՒԹԻՒՆ ՓՈՐՁԱԲՆՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արարագիտության ամբիոնում և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում: Աշխատանքում քննարկվող իիմնական խնդիրներն ու դրույթները լուսաբանվել են տարբեր պարբերականներում և ժողովածուներում («Իրան-Նամէ», «ORIENTALIA», «Բանբեր Երևանի համալսարանի», «Մերձավոր Արևելք») հրատարակած հոդվածներում:

Հեղինակի հրատարակած հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

ԱՇԽԱՏԱՎԵՒԹԻՒՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ իիմնավորվում է հետազոտվող թեմայի գիտական արդիականությունն ու բաղաքական հրատապությունը, տրվում է օգտագործված

գրականության համառոտ տեսությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև աշխատանքի մեթոդաբանական հիմքն ու գիտական նորույթը:

Ներածությունը ներառում է նաև աղյուրագիտական նյութի (Ղուրանի, հայիսների ժողովածուների և իր նիշամի կազմած «Կարք Մարգարեի» աշխատության) հավաքագրման համառոտ պատմությունը:

Առաջին գլխում՝ «ՌԻՄԱՎԵՒ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՊԱՏՄԱՎՈՅԱՆԵՐԸ», քննարկվում է VI-VII դդ Արաբական թերակղզու պատմաաշխարհաբարձրական իրավիճակը: Մանրամասն ուսումնասիրության են ենթարկվել պատմական այն իրադարձությունները, որոնք անմիջականորեն նպաստեցին ումնայի ծևավորմանը և կյայացմանը:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «ԱԼ-ԱԿԱԲԱՅԻ ԻԱՆԴԻՎՈՄՆԵՐԻ ԱՇԱՋԱՎՈՒԹՅՈՒՄԸ ՊՈՄՆԱՅԻ ԿԱՅԱԳԾՄԱՆ ԳՐՈՇՈՒՄ», քննարկվում են 619-620 թթ. Մուհամմադի և յասրիբցիների միջև Մեքքայի հյուսիսում գտնվող ալ-Ակաբա լեռանցքում տեղի ունեցած հանդիպումները, որոնք Մուհամմադի և նրա հետևորդների համար պարարտ հող նախապատրաստեցին՝ Յասրիբ տեղափոխվելու (իհջրա) համար: Աղյուրագիտական հարուստ նյութի հիման վրա վերհանվում է արժեքային այն հենքը, որի շուրջ Մուհամմադ մարգարեն կառուցեց ապագա համագործակցությունը՝ հիմնելով նոր ծևավորվող կառույցի առանցքը: Քննության է ենթարկվում նաև արաբական բանու խաղրաց և բանու առևտ ցեղերի միջև առկա հակասությունների սրումը, ինչը նպաստեցին Մուհամմադի Յասրիբ տեղափոխվելուն, ուր նա իր ուսմունքով հանդես եկավ միավորիչ ուժի դերում:

Գլխի երկրորդ՝ «ՄԱԴԻՆԱՅԻ ԻԱՄԱՋԱՅՄԱԳԻՐԸ ՊՈՄՆԱՅԻ ԾԵՎՈՐՄԱՆ ԻԱՄԱՍԻՔՍՄՈՒՄ» ենթագլխում, առաջին անգամ թարգմանաբար ներկայացվում և մանրամասն վերլուծության է ենթարկվում Մուհամմադի և Յասրիբի բնակչության միջև կնքված «Մադինայի համաձայնագրի» անվամբ հայտնի պայմանագիրը, որ նպաստեց ումնայի կյայացմանը: Ուսումնասիրության ընթացքում առանձնացվել են այն արժեքներն ու սկզբունքները, որոնք Մուհամմադի կողմից դրվում էին ապագա ումնայի հիմքում: Մուհամմադը ձկուն և զգաստ մոտեցում ցուցաբերեց նոր համայնքի կազմակերպման գործում: Առանձին ցեղերի հարաբերություններն ու պարտավորությունները պահպանվեցին, չխարարվեցին տեղական առաջնորդների

իրավունքները, իսկ իրեն Մուհամմադը վերապահեց վիճակարույց հարցերով որոշումներ կայացնելու իրավունքը: Այս ամենի հետ մեկտեղ նա ամրագրեց քաղաքական կազմակերպվածության նոր սկզբունքներ, ըստ որի նախատեսվում էր ընդհանուր ուժերով պայքարել արտաքին թշնամու դեմ, ինչպես նաև ապահովել համայնքի բոլոր անդամների անվտանգությունը: Ըստ եռևյան, այս համաձայնագրում ամենակարևոր դրույթը հանցագործի պատասխանատվության անձնավորումն է, որը գրկում էր նրան ցեղի աջակցությունից և խոչընդոտ դարմում միջցեղային պայքարի առաջացման գործում կանխելով Յասրիի հետագա քայլայում:

Ալեքսանդրոսության ԵՐԿՐՈՐԴ ԳԼԽՈՒՄ՝ «ՈՒՍՍՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՒՐԱՆՈՒՄ ԵՎ ՍՈՒՆՍՅՈՒՄ», ուսումնասիրվում են «ումա» եզրի նշանակությունները Ղուրանում և հայիսներում:

Գլխի առաջին ենթագլխում՝ «Ումա եզրի իմաստային զարգացումը Ղուրանի տեքստում», առաջնորդվելով Տ. Նյոլդեկեի առաջարկած սուրաների բաժանման ժամանակագրությամբ, որի համաձայն սուրաները՝ կապված այն հանգամանքի հետ, թե որտեղ են դրանք արտասանվել, բաժանում ենք երկու հիմնական խմբերի՝ մեքքայական և մադինայական: Մեքքայական սուրաները, կախված իրենց ոճական առանձնահատկություններից, բաժանվում են երեք ենթաշրջանների՝ բանաստեղծական, ռահմանական և մարգարեական:

Ըստ շրջանների ուսումնասիրվում է ումա եզրը, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս տեսնել հետազոտվող եզրի զարգացումը ժամանակի ընթացքում և հանգել հետևյալ եզրակացության: Մարգարեն քարոզչության սկզբնական շրջանում ումա եզրը կիրառում էր մարդիկ, ժողովուրդ» և ընդհանրապես մարդկային բազմություն իմաստներով՝ չտարբերելով այն աշ-կառում, ամ-նաս և մարդկային բազմությունը նկարագրող այլ եզրերից: Սակայն հետզիտես սկսում են փոփոխություններ նեկատվել ումա եզրի մեկնաբառության մեջ: Ի հայտ են գալիս նոր իմաստներ, որոնք ընդգծում են նրա դաշտական բաղկացուցիչները, այսինքն՝ արդեն ումա է ընկալվում մարդկային այն բազմությունը, որն ունի առաքյալներ, Սուրբ գիրք ու պաշտամունքի վայրեր և առաջնորդվում է ծշմարտությամբ և արդարությամբ:

Մադինայական քարոզչության ժամանակ արդեն տեսանելի է, որ խոսելով ումայի մասին, նկատի է առնվում կրօնական համայնքը: Այս շրջանում ումա եզրն ավելի ու ավելի է ամրապնդում իր մեջ այդ իմաստը:

Ուշադրություն է գրավում նաև այն հետաքրքիր հանգամանքը, որ ումա եզրը Ղուրանում միշտ հանդիպում է անորոշ առումով: Կարելի է ենթադրել, որ ամենայն հավանականությամբ Ղուրանում այս գաղափարը ըննարկվում է ընդհանուր առմամբ, այսինքն՝ փորձ է արվում տալ այդ նոր երևույթի սահմանումը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Ումա եզրի նշանակությունը հայիսներում», քննության է ենթարկվում ումա եզրի կիրառությունն ու նշանակությունը սուննիական իւլամում իրենց արժանահավատությամբ հարգանք վայելող վերը նշված հաղիսների վեց ժողովածուներում:

Այս հետազոտությունը հնարավորություն է տալիս բացահայտել, թե ինչ համատեքստում է Մուհամմադն օգտագործում այս եզրը, և նշել մոտավորապես այն ժամանակահատվածը, եթե ումա հասկացությունը ծևափորվում է որպես հատուկ եզր՝ մուսուլմանների համայնքը բնորոշելու համար: Կատարված հետազոտությունը հնարավորություն է տալիս նշել, որ հակառակ այն հանգամանքին, որ հաղիսներում հանդիպում են ումա եզրի կիրառության տարբեր ծեսեր ու նշանակություններ, այդումնայնիվ, նրանց մեջ՝ մասում ուման օգտագործվում է որպես առանձին, կայացած հասկացություն՝ հավատացյալների միասնականության կազմակերպման ծև նշելու համար:

Ալեքսանդրոսության ԵՐԿՐՈՐԴ ԳԼԽՈՒՄ՝ «ԳԵՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒՍՍՎՅՈՒՄ», քննարկվում են ումայի դեկավարի ինստիտուտին վերաբերող խնդիրներ:

Գլխի առաջին ենթագլխում՝ «Մուհամմադի՝ գերագույն իշխանության ինստիտուտի իրագործումը: Ումայի «կատարյալ» դեկավարի կերպարը», հետազոտվում է ումայի դեկավարի դիրքում Մուհամմադի ստանձնած գործառույթները: Յամեմատություն է անցկացվում նախահալամական շրջանում առկա դեկավարման ինստիտուտների և ումայի դեկավարի դիրում Մուհամմադի կողմից իրականացվող գործողությունների միջև, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս տեսնել, որ ումայի դեկավարումն իրականացնելիս Մուհամմադն իր ծեռքում է կենտրոնացնում նախահալամական

տոհմացեղային հարաբերությունների ծանոթ այնպիսի գործառույթներ, ինչպիսիքն են սայիդի (ցեղապետի), կախի (ռազմական առաջնորդի), հարամի (միջնորդ դատավորի) և հոգևոր առաջնորդի գործառույթները, որոնք մինչ այդ իրականացվում են իմանականում տարբեր մարդկանց կողմից:

Այս խնդրի ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ լինելով ուժմայի հիմնադիրը և առաջին դեկավարը՝ գերազույն իշխանության կրողը, Մոլհամադը ծևավիրեց դեկավարի կատարյալ կերպարը, որը չափանիշ պիտի դառնար հետագա սերունդների համար:

Գլխի երկրորդ ենթագլխում՝ «Գերագույն իշխանության ինստիտուտների ծևավորումը Մուհամմադի մահից հետո», անդրադարձ է կատարվում Մուհամմադի մահից հետո գերագույն իշխանության ինստիտուտի գաղաքամանը:

Մուհամմադի մահից հետո առաջացած գերագույն իշխանության վակուումը մասամբ այդ ինստիտուտի փոխանցման մեխանիզմների բացակայության արդյունք էր, որն իր հերթին նպաստեց գերագույն իշխանության տարրեր հայեցակարգերի առաջացմանը:

Ապենախսության այս մասում մանրամասն հետազոտվում է գերազույն իշխանության փոխանցման՝ տիրակալություն (մուլք) ինստիտուտի անհամատեղելիության հարցերն իսլամական արժեքային համակարգի հետ, ինչպես նաև ուսումնասիրվում են խալիֆայի ինստիտուտի ծևավորմանը, կայացմանը և գարգացմանն առնչվող խնդիրները: Խալիֆայի ինստիտուտի համատեքստում դիտարկվում է Օմայյանների և Աբրասյանների առաջադրած խալիֆայի ինստիտուտի մոդելները՝ պարզելու համար նրանց նմանություններն ու տարրերությունները: Դետազոտությունը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ ժամանակի ընթացքում խալիֆայի ինստիտուտը ինաստափիշվում է՝ «Մարգարեի ժառանգորդից» վերածվելով «Ալլահի ժառանգորդի», իսկ նուսուլմանական համայնքում իշխանությամբ օժտված անհատների կողմից խալիֆա տիտղոսի կիրառությունը դառնում է նրանց իշխանության օրինականացման նախապայման, որով նրանք կարող են ցույց տալ իրենց իշխանության աստվածային բնույթը և չընդիալի կապը նախորդ սերունդների հետ:

Որպես գերագույն իշխանության ընկալման նոր փուլ քննարկվում է նաև ամիրու-լ-մու միջնին (հավատացյալների տիրակալի) ինստիտուտի ձևավորումը:

Ուստմնասիրության է Ենթարկվում նաև գերագույն իշխանության շիական (հմամաթ) և խարիժական հայեցակարգերը՝ Ենթակացնելով նրանց առաջացման ու ձևավորման պատմությունը, ինչպես նաև հիմնական զարափառներն ու սկարունքները:

Այս գլխի վերջուն համեմատություն է անցկացվում բոլոր վերոնշյալ մոդելների և չափանիշ հանդիսացող Մուհամմադի կառավարման մոդելի միջև՝ պարզելու համար նրանց միջև ընդհանուրություններն ու շեղումները:

Աստեղախոսության 20ՌՌՈՐԴ ԳԼԽՆՈՒՄ «ՈՒՄՍԱՅԻ ԱՆԴԱՍԵՐԻ ԿԱՐԳՎԿԻՆԱԿԸ», հետազոտվում է ումայի կառուցվածքը, նրա անդամների կարգավիճակը և ումային անդամակցության խնդիրն ընդհանրապես:

Քննարկվում է տերմինաբանական դաշտը, որով իսլամը բնորոշում է մարդկանց: Ուսումնասիրությունն այս բնագավառում ցույց է տալիս, որ իսլամն առանձնացնում է մարդկանց երկու հիմնական խմբեր՝ հավատացյալներ և ոչ հավատացյալներ: Ըստ այդմ՝ այս գլխում հետազոտվող խնդիրները բաժանվել են երեք հիմնական ենթագլուխների:

Գլուխ առաջին ենթագլխում՝ «Ումմայի մուսալման անդամները», քննության է ենթարկվում հավատացյալների կարգավիճակը՝ դիտարկելով նրանց որպես ումմայի անդամներ: Բերվում է հավատացյալի բարոյական նկարագիրը՝ մատնանշելով այն հիմնական արժեքները, որոնց կրողն, ըստ իսլամի, պիտի հանդիսանար հավատացյալը, որպեսզի համարվեր մուսուլմանական հանճանքի՝ ումմայի անդամ: Ուստանասիրության ընթացքում շոշափվել են միայն այն արժեքները, որոնք կարևոր են հասարակական հարաբերություններում և որպես հասարակական էակի բնութագրում են համատասարակին:

Հետազոտվում են նաև ումնայի ներսում շերտափորման առաջացման խնդիրները՝ ումնայի անդամների տարանջատումը «ընտրյալների» և «զանգվածի» (հասսա և ամմա): Համեմատություն է անցկացվում հավատացյալների եղայրության և հավասարության մասին Մուհամմադ մարգարեի քարոզների և հավատացյալների շերտափորման երկութիւ առկայության միջև:

Հավատացյալների հավասարության համատեքստում քննվում է ումնային ոչ արար մուսուլմանների անդամակցման խնդիրը, որը գոյություն ուներ իսլամի տարածման վաղ շրջանում:

Գլխի երկրորդ ենթագլխում՝ «Ումնայի ոչ մուսուլման ամուսները», ուշադրություն է դարձվել ոչ մուսուլմանների կարգավիճակի ուսումնափրությանը՝ պարզելու համար՝ արդյոք նրանք կարող են համարվել ումնայի անդամներ, թե՞ ոչ:

Դուրանի տերմինաբանական դաշտի ուսումնափրությունը ցույց է տալիս, որ իսլամը տարբերակում է ոչ մուսուլմանների երկու տեսակ: Նրանցից առաջնները անհավատներն են, որոնց Դուրանն անդրադառնում է ընդհանրական «մուշրիքունա» եզրով, իսկ մյուս խումբը, այսպես կոչված, «Գրքի ժողովուրդներն» են (հիմնականում հրեաներն ու քրիստոնյաները), որոնց կարգավիճակն իսլամում, ի համեմատություն առաջնների, ավելի բարձր է:

Քննարկվում են նաև այն մեխանիզմները (‘ամամ, սովոր և ահղ ազ-զիմմա), որոնք հնարավորություն են տալիս ոչ մուսուլմաններին ինտեգրվել իսլամական հասարակության մեջ և համարվել ումնայի անդամ:

Ումնային անդամակցությունը կարուրվում էր նրանով, որ մուսուլմանների և ոչ մուսուլմանների համար հանդիսանում էր կյանքի և ունեցվածքի անվտանգության նախապայման:

Գլխի երրորդ ենթագլխում՝ «Մուսուլմանների և ոչ մուսուլմանների փոխարքերությունները», հետազոտվում է մուսուլմանների և ոչ մուսուլմանների միջև փոխհարաբերությունները կարգավորող որոշ մեխանիզմներ, որոնք բխում են Դուրանից և Սուննայից: Սասնավորապես քննության են ենթարկվում մուսուլմանների և ոչ մուսուլմանների ողջունի փոխանակմանը, նրանց միջև ամուսնությանը և ժառանգությանը վերաբերող հարցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, ատենախոսն եղալակցնում է:

1. Դուրանում ումնա է սահմանվում մարդկանց այն համակեցությունը, որն ունի.
 - Միաստավածության գաղափարով արտահայտված միևնույն դավանանք (դիմ):

- Առաջյալ կամ առաջյաներ (ռասուլ), որոնք կապող օդակ են հանդիսանում այդ մարդկանց և գերագույն էակի (իսլամի պարագայում՝ Ալլահի) միջև:
- Սուրբ գիրք (ալ-քրիաք), որտեղ արտացոլված է գերագույն էակի խոսքը:
- Երկրպագության վայրերը (մանսաք):

Այս ամենի հետ մեկտեղ ծգություն է միասնականության (վահդաբուն)՝ առաջնորդվելով Ծշմարտությամբ (ալ-հակ) և արդարությամբ (ալ-ադլ):

2. Իր գործունեությամբ և ապրելակերպով Մուհամմադը ձևավորեց ումնայի կատարյալ դեկավարի կերպարը, որն իր մեջ էր ամփոփում ժամանակակիցներին քաջածանոր ցեղագետի, միջնորդ դատավորի, ռազմական ու հոգևոր առաջնորդների հատկանիշները: Նրա գործունեությունն իր մեջ ներառում էր հավատացյալի կյանքի բոլոր կողմերը, իսկ անգերազանցելի հեղինակությունն ապահովված էր աստվածային նախախնամությամբ, որն էլ կասկածից վեր էր դասում նրա որոշումները:
3. Մուհամմադի մահից հետո առաջանում է գերագույն իշխանության վակուում, քանի որ դեռ իր կենդանության օրոք նա չէր մշակել իշխանության փոխանցման ոչ մի մեխանիզմ, սակայն հստակ ձևակերպել էր իսլամի անընդունելի վերաբերմունքը իշխանության այն ձևի հանդեպ, որը Դուրանում հիշատակվում է մուլք (տիրակալություն) եզրով:

Իսլամի պատմության մեջ գերագույն իշխանության ինստիտուտն անցել է կայացման հետևյալ ժամանակից:

- Համայնքը դեկավարելու համար առաջին մուսուլմանները և Մուհամմադի զինակիցները ստեղծեցին խալիֆայի՝ Մարգարեի «տեղապահի» ինստիտուտը, որի նպատակն էր հետևել, որպեսզի համայնքը՝ ումնան, առաջնորդվեր Ալլահի խոսքով և չշեղվեր ճիշտ ճանապարհից:
- Խալիֆայի ինստիտուտին զուգահեռ ձևավորվեց ամիրուլ-մու’միմինի՝ հավատացյալների հրամանատարի ինստիտուտը: Ի տարբերություն խալիֆայի ինստիտուտի՝ ամիրուլ-մու’միմինի ինստիտուտի համար իշխանության իրականացման օբյեկտ է հանդիսանում հավատացյալը

(մումին), այլ ոչ թե համայնքը՝ ուսման, որն էլ իր հերթին փոխում էր գերագույն իշխանության ողջ բնույթը:

- Օմայյանների և Աբբասյանների «ջամբերի» շնորհիվ գերագույն իշխանության ժառանգական փոխանցման ձևը, երբ խալիֆայի տիտղոսը ժառանգվում էր մեկ տոհմի-ցեղի անդամներից մեկը, դարձավ «նորմ»: Սակայն այն տարբերությամբ, որ Օմայյաններն իրենց իշխանությունը հիմնավորելու համար հենվում էին արաբական մտածելակերպի վրա, իսկ Աբբասյանները, այդ ամենի հետ մեկտեղ, իշխանության իրենց իրավունքը հիմնավորեցին նաև իշլամական արժեքներով:
- Խալիֆայության ներսում ընթացող պետական ինստիտուտների ձևավորման գործընթացներին ի պատասխան՝ առաջացան երկու իրար հակառակ կառավարման մոդելներ՝ շիական և խարիզիական:

Շիական կրոնափիլիստիկայական համակարգն առաջարկեց գերագույն իշխանության՝ իմամաթի հայեցակարգը, որը շիանների հիմնավորմամբ «աստվածային նախախնամության» արդյունք էր և այդ նույն նախախնամության հետևանքով իմամաթի հանդեպ բացարիկ իրավունքները պատկանում էին Ալիին և նրա սերունդներին:

Խարիզինների առաջարկած մոդելով համայնքի ղեկավարի ինստիտուտն ընտրովի մարմին էր, իսկ թեկնածուները կարող էին լինել բոլոր հավատացյալները՝ անկախ իրենց ծագումից, սակայն թեկնածուների համար պարտադիր նախապայման էր կյանքում Դուրանով ու սուննայով առաջնորդվելը, մարդկանց հետ արդարացի վարվելու կարողությունը և գենքը ծեղթին բռնապետ կառավարչի դեմ պայքարելու ուսակությունը:

4. Ումանայի անդամների ուսումնասիրությունն ամփոփելով՝ կարելի է առանձնացնել հետևյալ կետերը.

- Խալամը բաժանում է մարդկանց հավատացյալների և ոչ հավատացյալների, այսինքն՝ մուսուլմանների և ոչ մուսուլմանների:
- Ումանայի անդամ են բոլոր մուսուլմանները, սակայն նրանց միջև չի գործում խլամի հիմնական սկզբունքներից մեկը՝ հավատացյալների հավասարության

սկզբունքը, ինչը, նախևառաջ, ապացուցվում է ընտրյալների և զանգվածների խավերի առկայությամբ:

- Ումանայի անդամ են նաև մուսուլմանների իշխանության ներքո գտնվող տարածքների (որպէս աղ-խալամ) ոչ մուսուլման բնակչությունը, որոնց անդամակցությունը պայմանավորված էր երկու տարբերակով: Առաջինը՝ ոչ մուսուլմանները հովանավորության մասին դաշինք էին (ահլ ազ-զիմնա) կնքում մուսուլմանների հետ և դառնում էին հովանավորության տակ գտնվող ժողովուրդ (ահլ ազ-զիմնա) և այդ կարգավիճակով հանդիսանում ումանայի անդամ: Երկրորդ տարբերակը նախատեսում էր ոչ մուսուլմանների կողմից խլամի ընդունումը, որով նրանք դառնում էին մուսուլմաններ և օգտվում մուսուլմանների իրավունքներից և պարտականություններից:

ՅԱՎԵԼՎԱԾՈՒՄ այսուակների տեսքով բերվում են այն հանգատողերը և հաղիները, որտեղ հանդիպում է «Ումանա» եզրը, ինչպես նաև այն հանգատողերը, որոնք պարունակում են «մու'նին» և «մու'նին» տերմինները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՍ ԱՊԱԽԵԻՆ ՂԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ

ԴՐԱՊԱՐԱԿՈՒՄԵՐԸ

1. Ողջույնի ծեսը սուլնիական խլամում, Իրան-Նամէ, Երևան, 2003, № 38, էջ 57-59:
2. «Ումանա» հասկացության զարգացումը Դուրանի տեքստում, ORIENTALIA, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Երիտասարդ դասախոսների և ասպիրանտների գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2004, պրակ II, էջ 78-87:
3. Ալ-Ակաբրայի հանդիպումները որպես ումանայի հիմնադրման նախապայման, Իրան-Նամէ, Երևան, 2005, № 39, էջ 36-38:
4. Մեղինայի համաձայնագիր, Բանբեր Երևանի Դամալսարանի, Երևան, 2005, № 1, էջ 207-211:
5. «Ումանա» եզրի կիրառությունը հաղիներում, Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2005, պրակ II, էջ 157-160:

Научный руководитель доктор исторических наук, профессор
Кочарян Айк Мкртичевич

**СТАТУС И ОПРЕДЕЛЕНИЕ УММЫ В КОРАНЕ И РАННей МУСУЛЬМАНСКОЙ
ЛИТЕРАТУРЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по
специальности 07.00.02 – «Всеобщая история»

Защита состоится 16 ноября 2005 г. по адресу: 375019, г. Ереван, проспект Маршала
Баграмяна, 24г, Институт Востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению сущности уммы, основанное на
источниковедческом исследовании таких материалов, как Коран и хадисы⁴¹.

Появление социально-политической организации, общество нового типа под названием умма, связана с переселением (хиджра) пророка Мухаммеда в Медину и с той деятельностью, которую он развернул там. В глазах мусульман мединское общество возглавляемое Мухаммедом (умма) является воплощением порядка и справедливости. Оно и есть эталон «идеальной уммы» стремление воссоздать которое лейтмотивом проходит через четырнадцативековую историю ислама. Почти во всех исламских движениях и течениях (от умеренных до радикальных) можно углядеть вышеупомянутый процесс.

Проблематика данной диссертационной работы способствует глубочайшему и системному исследованию процессов происходящих в исламском мире. В этом плане данная проблематика особенно актуальна для независимой Армении, если иметь ввиду то обстоятельство, что большая часть населения трех соседних стран мусульмане, а одна из соседних стран – Иран, является исламским государством по конституции.

Для достижения цели диссидентом поставлены следующие задачи: 1) проследить исторические предпосылки становления уммы, 2) исследовать значения термина «умма» в

⁴¹ В данной работе использовались своды шести авторитетных мухадисов принятых в суннизме.

Коране и хадисах, 3) создать источниковедческую базу для исследования уммы, 4) в целях комплексного изучения данной проблематики рассмотреть статус членов уммы и проблемы членства, а также сущность и характер института «руководителя уммы».

Работа состоит из введения, четырех глав, заключения, библиографии и приложения.

Во введении обосновывается актуальность темы исследования, дается обзор литературы и источников, использованных в работе, формулируется цель и задачи данного исследования, определяется теоретическое и практическое значение. Приводится краткая история созиания источников – Корана и хадисов.

В первой главе - «Исторические предпосылки становления уммы» - дается общий обзор событий конца VI – первой половины VII вв. На фоне этих событий выделяются встречи в аль-Акабе (619-620 гг.) и «Мединское соглашение» (620 г.), как практические шаги для создания будущей уммы.

Во второй главе - «Понятия умма в Коране и Сунне» - используя временное разделение сур, предложенное Т.Нёлдеке, рассматривается поэтапное развитие и обогащение понятия «умма» в Коране. Отдельно исследуются те хадисы, в которых используется термин «умма», стараясь расскрыть смысловую нагрузку данного понятия.

В третьей главе - «Формирование и проблемы института верховной власти в умме» - исследования разделены на две части. В первой – рассматривается образ пророка Мухаммеда, как идеального руководителя, главы общины мусульман, а во второй – трансформация и «деформация» института верховной власти на сравнительном примере Омейядской и Аббасидско-шиитской концепций верховной власти. А как начало этих изменений предлагается образование институтов «халиф» и «амиру-л-муминин».

В четвертой главе – «Статус членов уммы» - исследуется структура уммы, статус его членов и механизмы членства в умму. В начале этой главы анализируется терминология Корана, с помощью которых ислам обращается к людям, разделяя их на правоверных и неверных. Отдельно рассматриваются механизмы и проблемы членства для этих двух групп. Делаются выводы о несоответствии духу ислама отношение первых мусульман арабов к мусульманам не арабского происхождения, как к второстепенным членам общины. Диссидент аналогично анализирует статус и механизмы членства для не мусульман и делает

обобщение, что членство для не мусульман возможно при принятии ислама, или заключении договоров, таких как аман, сулх и ахд аз-зимми.

В этой главе на примере практики наследования, женитьбы и обмена приветствиями рассматривается также проблема взаимоотношений между мусульманами и не мусульманами.

В заключении подводятся итоги исследования, обобщаются выводы, сделанные в ходе написания данной работы.

HAYK KOCHARYAN

THE STATUS AND DESCRIPTION OF *UMMAH* IN THE QURAN AND EARLY MUSLIM LITERATURE

28